Աշխատանքի ծածկագիր 4485

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ.Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 3-րդ, 4-րդ, 10-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ հարցերը:

Բողոքի 1-ին մասի վերաբերյալ.

Հանձնաժողովը գտնում է, որ ընթացակարգային խախտում առկա չէ, քանի որ քաղաքացիաիրավական և ընտանեկան հարաբերություններին առնչվող հարցերը նյութական իրավունքի հարցեր են:

Բողոքի 2-րդ հարցի վերաբերյալ.

Վկայակոչված հարցերը բխում են Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքից և կարող էին ունենալ նաև դատավարական բնույթ և չեն կարող գումարվել դատավարական իրավունքի քննության արդյունքներով արձանագրված միավորներին:

Բողոքի 4-րդ հարցի վերաբերյալ.

Ինչ վերաբերում է Դատական օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցերը մշակած մասնագետի կամ մասնագիտացված կազմակերպության որոշած անհրաժեշտ գրականություն, իրավական ակտեր և այլ նյութերը տրամադրելուն, ապա իրավասու մարմինը նման որոշում չի կայացրել:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 3

Բողոքաբերի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 222-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 4

Բողոքաբերի պատասխանը ճիշտ է, համապատասխանում է թեստային առաջադրանքի ուղենշային ճիշտ պատասխանին, ուստի պետք է գնահատել 1 միավոր:

Հարց 10

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 226-րդ հոդվածի կարգավորումներից: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 26

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 263-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներից: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 27

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բացառվում է հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Հարց 29

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բ/ տարբերակն է, որ բխում է ՔԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի և 203 հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 4485 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 4-րդ, 27-րդ հարցերի պատասխանները գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ